Ո՞Վ Է ԱՌԱՎԱՆ ՀԱՉԱՐԱՊԵՏԸ

ԱԼԲԵՐՏ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Մ. թ. IV դարի հռոմեական պատմիչ Ամմիանոս Մարկելինոսը իր «Գործեր և դեպքեր» հայտնի երկում[1] *հետաքրքիր դրվագներ ու մանրամասներ է հաղորդում IV դ. 60—70-ական թվականներին Հայաստանում տիրող ռազմաքաղաքական իրավիճակի, ինչպես և Արշակ Բ թագավորի ու նրա որդի Պապի եղերական ճակատագրի մասին, որոնք գալիս են լրացնելու Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու ավանդած տեղեկությունները նույն անցքերի և անձերի վերաբերյալ։ Ամիանոսը գրում է. «Այս խայտառակ գործը** կատարելուց հետո նա (Շապուհը-Ա. Մ.) Հայաստանը վստահեց Կիլակես (Cylaces) ներքինուն և Առաբանեսին (Arrabannes), որոնք մի ժամանակ փախել էին նրա մոտ և ապաստան գտել։ Դրանցից մեկը, ինչպես ասում էին, առաջներում այդ ժողովրդի վերակացուն (praefectus) է եղել, իսկ մյուսը՝ զորագլուխ (magister armorum)։ Նրանց պատվեր տվեց ամբողջ զորությամբ ավերել պարիսպներով ու զորքով ամուր պաշտպանված Արտագերս (Artogerassa) քաղաքը, որտեղ գանձերից բացի ապաստան էին գտել նաև թագուհին ու Արշակի որդին։ Կիլակես ներքինին, որ հմուտ էր կանանց շողոքորթելու մեջ, Առաբանեսին վերցրեց իր հետ և ընդհուպ մոտեցավ պարիսպներին՝ նախապես ապահովության երաշխիք առնելով։ Նրան թույլ տվեցին իր ուղեկցի հետ մուտք գործել ամրոցը, ինչպես որ ինքը պահանջել էր, և սպառնալիքների տակ խորհուրդ տվեց պաշտպաններին ու թագուհուն՝ շտապ անձնատուր լինելով մեղմել անագորույն Շապուհի ցասումը։ Շատ խոսքեր փոխանակեցին, մինչև վերջապես նրանք եղկուսն էլ, որ մինչ այդ չափազանց հեռու էին գնացել դավաճանության մեջ, փոխեցին իրենց ծրագիրը՝ կարեկցելով թագուհուն, որ ողբում էր իր ամուսնու սոսկալի ճակատագիրը»*[2]։

Այնուհետև, որպես թե բարձր պաշտոն ստանալու ակնկալությամբ, Կիլակեսն ու Առաբանեսը սատարում են թագուհուն. նրանց խորհրդով հայերի մի զորախումբ գիշերով հանկարծակի դուրս է գալիս բերդից և կոտորում պարսից քնած զորքը։ Մինչև իսկ նրանք միջնորդներ են ուղարկում հունաց Վաղես կայսեր մոտ՝ խնդրելով Արշակի որդի Պապին կարգել իրենց թագավոր[3]։ *Տերենտիոս զորավարի օգնությամբ Պապը վերադառնում է Հայաստան։ Այս ամենը լսելով, Շապուհը սաստիկ մոլեգնում է, մեծ զորքով Հայաստան է դիմում և հրամայում՝ անխնա կողոպուտով ամայացնել երկիրը։ Նրա արշավանքից սարսափած, Պապը, Կիլակեսն ու Առաբանեսը շտապեցին ապավինել այն բարձր լեռներին, որոնք բաժանում էին հույների գավառներն ու Լազիկան։ Այստեղ նրանք հինգ ամիս թաքնված մնացին խոր անտառներում ու կիրճերում։ Շապուհը հրի մատնեց հաղթանակով կամ մատնությամբ գրավված բերդերն ու ճամբարները և մեծաթիվ զորքով տիրելով Արտագերս ամրոցին՝ գերեվարեց Արշակի տիկնոջն ու գանձերը։ Դրանից հետո հույները կոմս*

---

[1] Ammianus Marcellinus. Römische Geschichte, Berlin. 1971, Vierter Teil, XXVII, 12.

** Նկատի ունի հայոց Արշակ թագավորին Ագաբանա (Անհուշ) ամրոցում բանտարկելը։*

[2] Ammianus Marcellinus, *նշվ. աշխ., էջ 88—90։*

[3] *Նույն տեղում, էջ 90, 92։*

Արինթեսին զորքով ուղարկեցին հայերին օգնության՝ պարսիկների նոր ներխուժումից պաշտպանվելու համար։ Այստեղ հանկարծ Շապուհը—և Ամմանոսը լրջորեն չի պատճառաբանում, թե ինչու—սկսում է քծնել Պապ թագավորին և հուսալով դարձնել իր դաշնակիցը, գաղտնի դեսպանների միջոցով կշտամբում է նրան՝ թե իբր Պապը շատ անփույթ է իր անձի նկատմամբ, թե նա արքայական պատմուճանով ստրկություն է անում Կիլակեսին ու Առաբանեսին։ Այդ շողոքորթությունից խաբված, Պապը հրամայում է սպանել իր երկու գործակիցներին և նրանց գլուխները ուղարկում է Շապուհին՝ ի նշան իր հաճոյակատարության։ Այնուհետև մի քանի շաբաթվա մարդիկ—ինչպես վկայում է Ամմիանոսը—որոնց թվում և հռոմեացի զորավար Տերենտիոսը, երիտասարդ Պապ թագավորի դեմ բազմաթիվ ամբաստանություններ են ներկայացնում Վաղեսին[4]։ Ընդսմին, Տերենտիոսը շարունակ հիշեցնում էր արքունիքին Կիլակեսի և Առաբանեսի մահը։ Այս ամենն ավարտվեց խնչույքի ժամանակ երիտասարդ Պապ թագավորի դեմ սարքած դավադրությամբ ու նրա սպանությամբ, որ Ամմիանոսը անլուր ու խայտառակ ոճիր է անվանում։

Սակայն այս վերջին դեպքերին մանրամասն անդրադառնալը դուրս է մեր հետապնդած խնդրից։ Հարց է առաջանում՝ ովքե՞ր են այս Կիլակեսն ու Առաբանեսը, որոնք Ամմիանոս Մարկելինոսի գրքում մերթ հանդես են գալիս իբրև պարսիկների կողմը փախած բարձրաստիճան հայ գործակալներ, որոնց Շապուհը վստահում է Արտագերս ամրոցի գրավման գործը, և միաժամանակ, առանց որևէ լուրջ պատճառի՝ այս երկուսն անակնկալ դարձի են գալիս, փրկում Արտագերս ամրոցը պաշարումից, նպաստում Պապի թագավոր կարգվելուն, անբաժան ուղեկցում նրան Լազիկայի լեռներում ապաստանած ժամանակ, և դարձյալ առանց լուրջ պատճառի՝ Պապ թագավորը, իրեն թև ու թիկունք դարձած Կիլակեսին ու Առաբանեսին սպանելով, գլուխներն ուղարկում է Շապուհին՝ նրան հաճոյանալու համար։ Թեև Ամմիանոսն այս դեպքերը նկարագրում է բավական մանրամասն, սակայն հոգեբանորեն և տրամաբանորեն բավարար չափով չի հիմնավորում։ Բարեբախտաբար, միևնույն անցքերին անդրադարձել են նաև Փավստոս Բուզանդն ու Մովսես Խորենացին, որոնք օգնում են բացահայտելու հռոմեական պատմագրի հաղորդած դեպքերի իրական դրդապատճառները և Կիլակեսն ու Առաբանեսն անձերի ինքնությունը։

Նախ նշենք, որ ի տարբերություն 1910—1915 թթ. բեռլինյան հրատարակության, Ամմիանոսի երկի հին տպագրությունները[5] Arrabannes անվան դիմաց ունեն Artabannes (Արտավան)։ Անցյալ դարի 20-ական թվականներին Սեն-Մարտենն առաջին անգամ ուշադրություն հրավիրեց Արտավան անվան ձեռագրական ընթերցվածներին՝ Arabanis, Arrabanes, Arrabones, նշելով որ դրանք ենթադրել են տալիս մի այլ անուն՝ Առավան[6]։ Ամմիանոսի Վատիկանյան ձեռագրի Առավան անվան վրա մի անգամ ևս ուշադրություն հրավիրեց Յ. Մարկվարտը[7]։ Եվ իսկապես, Ամմիանոսի երկի Մայր ձեռագիրը, որից ծագում են հետագա գրչագրերը, պահպանել է magister armorum-ի անվան

---

[4] Նույն տեղում, XXX, 1, էջ 198 և հաջ.։

[5] Ammiani Marcellini. Rerum gestarum historia, Lugduni, Le Preux, 1591; նույնի՝ Rerum Gestarum libri qui supersunt, Franc. Eussenhardt recens. Lipsiae 1874.

[6] Histoire du Bas-Empire par Lebeau. Nouv. edit, par M. de Saint-Martin, Paris, 1824, p. 16.

[7] Յ. Մարկվարտ, Պատմություն հայերեն նշանագրերու և վարուց ս. Մաշտոցի, գերմ. թարգմ. Հ. Վարդանյանի, Վիեննա, 1913, էջ 58, ծան. 1։ Յ. Մարկվարտի արժեքավոր ուսումնասիրության նոր և հանձնարարելի թարգմանությունը՝ «Հայոց այբուբենի ծագումը և Մ. Մաշտոցի կենսագրությունը», գերմաներեն բնագրից կատարել է Գեորգ Աբգարյանը (տե՛ս «Մեսրոպ Մաշտոց», հոդվածների ժողովածու, Երևան, 1962, էջ 179)։

նախնական անաղարտ Arrabannes ձևը[8]։ Չնայած սրան, եվրոպացի և հայ հեղինակները դանց են առել այս կարևոր ուղղումը և ամենուրեք Ամմիանոսի magister armorum-ին անվանել են Artabannes կամ՝ Արտավան, որ արդյունք է գրչական թյուր ընդօրինակման։ Այսպիսով, նրանք ակամա շեղվել են այն միակ ուղուց, որ կարող էր տանել դեպի այդ անձի բացահայտումը։

Ֆրանսիացի հայագետ Վ. Լանգլուան, նրան հետևելով և գերմանացի իրանագետ Ֆ. Յուստին գտնում են, որ այս Կիլակեսն ու Արտաբանեսը կարող են նույնացվել պարսից Զիկ և Կարեն զորապետների հետ, որոնք հանդիպում են Փավստոսի մոտ (Դ. Ութ)։ Այս կարծիքը հենվում է սոսկ հետևյալ անպահույմ դատողության վրա. Զիկը Փառանձեմ թագուհուն գերի վերցրեց Արտագերսում, հետևաբար նա Ամմիանոսի հիշած Կիլակեսն է, որին հանձնարարվեց գրավել Աուտոգերասան[9]։ Ըստ Յուստիի, հետագայում այս Զիկը դարձավ Շապուհ Դ-ի կողմից 387 թ. դահ բարձրացած հայոց խոսրով Դ թագավորի դաստիարակը, որին Փավստոսն անվանում է Զիկ Նուիրակ (Զ. Ա.)։ Մեկ այլ Զիկ Նուիրակապետ, որին սպանեց Վասակ Մամիկոնյանը, Փավստոսը հիշում է Դ դպրության Լե գլխում։ Լանգլուան ենթադրում է, թե «Զիկ» Կիլակես անվան տարբերակն է, իսկ «Կարեն» համարում է Արտաբանեսի տոհմանունը, որին Շապուհ Ա-ն Հայաստանի սատրապ նշանակեց 368 թվականին[10]։ Ն. Ակինյանը իրավացիորեն ընդդիմանում է Լանգլուային և անկարելի համարում այսօրինակ նույնացումը, «վասն զի, ինչպես Ամմիանոս և Փավստոս կհավաստեն, անոնք (Կիլակեսն ու Առաբանեսը—Ա. Մ.) գլխատվեցան Պապի հրամանով կամ ըստ Փավստոսի՝ Մուշեղ զորավարեն»[11]։ Հիշեցնենք նաև մի ոչ պակաս էական հանգամանք. Ամմիանոսը շեշտում է, թե Կիլակեսն ու Առաբանեսը անցյալում հայերի մոտ եղել են բարձրաստիճան պաշտոնյաներ և հետագայում միայն անցել Շապուհի կողմը, այս պարզ պատճառով էլ նրանք ոչ մի ընդհանուր բան չեն կարող ունենալ հիշյալ պարսից իշխանների հետ։ Ուստի և Զիկ-Կիլակես անվանափոխումը նույնքան շինծու է, որքան և Արտաբանեսին Լանգլուայի ընծայած Կարեն տոհմանունը։ Յ. Մարկվարտը մանրակրկիտ քննությամբ դիտել է տվել, որ Զիկը և Կարենը պարսից զորքի գլխավորներն էին Արտագերս ամրոցի երկրորդ պաշարման ժամանակ, 369 թ.[12]։ Թեև Մարկվարտին ծանոթ է Առաբանես ուղիղ ձևը, բայց նա մյուս հետազոտողների նման նրան անվանում է Արտավան և առանց որևէ հիմքի նույնացնում Փավստոսի մոտ հիշված Վաչե Մամիկոնյանի որդի Արտավազդի կամ Մանվել Մամիկոնյանի հայր Արտաշիրի հետ[13]։

Հայ հեղինակները նույնպես Ամմիանոսի հիշատակած պատմական հայացքի անձերի բացահայտման հարցում տարբեր և իրարամերժ կարծիքի են

---

8 Այդ բնագիրը հայտնաբերել է իտալացի հումանիստ և գրահավաք Պոգիո Բրաչոլինին 1417—1418 թթ. և կոչվում է Ֆուլդայի ձեռագիր։ Այժմ այն պահվում է Վատիկանի ձեռագրատանը՝ «Codex Vaticanus Latinus 1873»։ Նշված ձեռագիրն էլ հիմք է ծառայել գերմանացի բանասեր Կլարկի աշխատասիրած 1910—1915 թթ. հրատարակության և ապա 1970—1971 թթ. բեռլինյան քառահատոր հրատարակության լատիներեն բնագրի և զուգադիր գերմաներեն թարգմանության համար (տե՛ս Ammianus Marcellinus. Römische Geschichte, Berlin, 1970, Bd. 1, S. 41, 48)։

9 Collection des Historiens anciens et modernes de l'Arménie publ. par Victor Langlois, 2 voll, I, Paris, 1867, p. 272; F. Justi, Iranisches Namenbuch, S. 385 (տե՛ս Zik).

10 Victor Langlois, Նշվ. աշխ., I, 273; F. Justi, Նշվ. աշխ., էջ 31, 157.

11 Կորյուն, Պատմություն վարուց ս. Մաշտոցի, հրատ. Ն. Ակինյանի, Վիեննա, 1952, էջ 73, ծան. 9։

12 I. Markwart, Untersuchungen zur Geschichte von Eran, I, Göttingen, 1896, S. 212.

13 Նույն տեղում, էջ 213—214։

հանգել։ Յ. Գաթըրճյանը[14] և Մ. Օրմանյանը[15] զորագլուխ Արտավանին նույնացնում են Վահան Մամիկոնյանի հետ, մինչդեռ Կիլակեսի հարցում տարբեր է նրանց մոտեցումը։ Գաթըրճյանը վերջինիս մեջ ճանաչում է Փավստոսի Հայր մարդպետին, իսկ Օրմանյանը՝ Մերուժան Արծրունուն։

Լեոն, ինչպես և Օրմանյանը, հանգամանորեն անդրադարձել է Ամմիանոսի Պատմության վերոհիշյալ դրվագներին և նշմարել միայն Ամմիանոսի և հայ աղբյուրների հիշատակած Վահան-Արտավանի և Մերուժան-Կիլակեսի նմանության սոսկ ընդհանուր գծերը[16]։ Նա օգտվել է Ամմիանոսի գրքի՝ Յու. Ա. Կուլակովսկու ռուսերեն թարգմանությունից[17], որում ամենուրեք Артабанн ընթերցվածն է։ Ակադեմիկոս Հ. Մանանդյանը, անդրադառնալով Արտավանի հարցին, որոշակի չի մատնանշում նրա կրկնատիպը հայ աղբյուրներում[18]։

Ամմիանոս Մարկելինոսի տվյալներով, Արտագերս ամրոցի պաշարմանը մասնակցած Կիլակեսը ներքինի էր, մի ժամանակ եղել է հայ ժողովրդի պրեֆեկտը, որը, անտարակույս, մարդպետը կամ մարդպետության պաշտոնն է։ Փավստոսն իր «Հայոց պատմության» մեջ (Դ. Մե) հաղորդում է, որ Արտագերսի պաշարման ժամանակ ներքինի հայր մարդպետը գաղտնի մտավ բերդը, սաստիկ նախատեց տիկնոջը ու անարգելով Արշակունյաց տոհմը՝ կատարած չարիքների ու Հայաստան աշխարհը կործանելու համար, նորից գաղտնի դուրս եկավ բերդից ու փախավ[19]։ Փավստոսի պատմածը Հայր մարդպետի՝ Արտագերս ամրոցը գաղտնաբար մուտք գործելու և Փառանձեմ տիկնոջ հետ վեճի բռնվելու մասին հաստատվում է Կիլակեսի այն բնութագրմամբ, որ տվել է Ամմիանոսը, թե նա հմուտ էր կանանց շողոքորթելու մեջ։ Նրա այդ հատկության վրա լին հույս դրել պարսիկները։ Կիլակես անվան լատիներեն ձևի մեջ դժվար չէ ճանաչել Փավստոսի Պատմության մեջ հիշված Դղակ, Դգղակ մարդպետին, որի ուղիղ ձևն է Գղակ կամ Գլակ[20]։ Թեև Փավստոսի մոտ Արտագերս ամրոցը սողոսկած Հայր մարդպետը և Ատրպատականի Գանձակում սահմանակալ կարգված Դղակ մարդպետը տարբեր անձինք են[21], բայց դրանից հարցի էությունը չի փոխվում։ Կասկած չի կարող լինել, որ Ամմիանոսի հիշած ներքինին իսկապես ինքը Գղակ մարդպետն է՝ «զԴղակ մարդպետ, որ անուանեալ կոչէր ըստ գործոյն՝ հայր թագաւորին»[22]։ Այս կարծիքին համամիտ են թե՛ Յ. Մարկվարտը և թե՛ Հ. Մանանդյանը[23]։

---

14 Յ. Գաթըրճյան, Տիեզերական պատմություն, հ. Բ, Վիեննա, 1852, էջ 504։

15 Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Կոստանդնուպոլիս, 1912, սյուն. 198, 204, 211, 212։

16 Լեո, երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1966, էջ 472։

17 Аммиан Марцеллин, История, в переводе Ю. А. Кулаковского, вып. III, Киев, 1908, кн. 27, гл. 12, с. 85—87; кн. 30, гл. 1, с. 193.

18 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության հ. Բ, Ա մաս, Երևան, 1978, էջ 195—198, 203—205, 208, 209, 217։

19 «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1914, էջ 220։

20 Հայր մարդպետին մահապատժի է ենթարկում Պապ թագավորը՝ Արտագերս բերդում, իր մայր Փառանձեմին անարգելու և մատնելու համար (Փավստոս Բուզանդ, Ե. Գ., էջ 242), իսկ Գղակ մարդպետը մահապատժի է ենթարկվում դարձյալ Պապի հրամանով՝ Շապուհի հետ Ատրպատականում գաղտնի բանակցություններ վարելու և դավադրության համար (Ե. Զ, էջ 257)։

21 Մեկ այլ Հայր մարդպետ էլ «չար և ժանտաբարոյիւք, անօրէն և անիրաւ քան զառաջին Հայր անուն մարդպետսն», իր գործած չարիքների համար սպանվում է վրեժխնդիր Շապասպ Արծրունու ձեռքով (Փավստոս Բուզանդ, Դ. ԺԴ, էջ 151)։

22 Փավստոս Բուզանդ, էջ 257։

23 I. Markwart, նշվ. աշխ., I, S. 212—214, նույնի Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930, S. 154 –155, Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 204։

Փավստոս Բուզանդն ու Մովսես Խորենացին պատմում են, որ Արշակ Թագավորին շղթայակապ Անհուշ (Անդմըշն) բերդն աքսորելուց հետո պարսից Շապուհ արքան մեծ զորք է ուղարկում Հայաստանը նվաճելու՝ Մերուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի առաջնորդությամբ, որոնք երևելի հայ նախարարներ էին և ուրացել էին հայրենիքն ու քրիստոնեական կրոնը։ Այս Վահան Մամիկոնյանի մասին ավելի մանրամասն տեղեկություն է տալիս Փավստոսը[24]։ Դա հայտնի սպարապետ, հայրենասեր Վասակ Մամիկոնյանի եղբայրն էր. Պարսիկների դեմ Արշակ Բ-ի մղած երկարատև պատերազմում նշանավոր նախարարներ Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը անցան պարսից Շապուհ արքայի կողմը, և քրիստոնեությունն ուրանալով՝ ընդունեցին մաղդեզանց կրոնը։ Իբրև դավաճանության վարձ, Շապուհը Վահանին կնության տվեց իր Որմիզդուխտ քրոջը. «և շնորհեաց նմա բարձ և զպատիւ՝ որ նոցուն լեալ էր նախնեաց [...] և ի մեջ զօրաց իւրոց շքեղացոյց զնա, և խոստացաւ նմա կեանս մեծամեծս առնել»[25]։

Մովսես Խորենացու հաղորդած տեղեկության համաձայն, Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը Հայաստան դալով պաշարեցին Արտագերս ամրոցը, որտեղ արքունի գանձերի հետ միասին ապաստանել էր Արշակ Թագավորի կինը՝ Փառանձեմ թագուհին։ Չնայած պարսից զորքը ոչինչ չէր կարողանում անել բերդի ու տեղանքի անմատչելի ամրության պատճառով, բայց Խորենացու վկայությամբ պաշարյալները կամովին, առանց բռնության անձնատուր եղան թշնամուն[26]։

Համեմատելով Ամմիանոսի ներկայացրած Առաբանեսին և Խորենացու մոտ հիշատակված Վահան Մամիկոնյանին, տեսնում ենք, որ նրանք երկուսն էլ Շապուհի հրամանով պաշարել են Արտագերս ամրոցը, երկուսն էլ եղել են մի ժամանակ հայերի մեջ նշանավոր անձինք և ապա փախել-անցել են Շապուհ թագավորի կողմը։ Այս տվյալները հիմք են տալիս պնդելու, որ Առաբանեսն ու Վահան Մամիկոնյանը միևնույն անձն են. ինչպես երևում է, հայ պատմիչներին հայտնի Վահանը կրոնի հետ միասին փոխել է և իր հայեցի անունը և կոչվել պարսկատ՝ Առավան, որի լատիներեն ճշգրիտ տառադարձումն է Arrabannes[27]։

Երբ Ամմիանոսն ասում է, թե Առաբանեսը նախկինում հայերի մեջ եղել էր զորագլուխ, ապա դրա տակ պետք է հասկանալ Մամիկոնյանների սպարապետության պաշտոնը, որ այդ տոհմի նախարարների առանձնաշնորհն էր։ Հենց այդ սպարապետ-զորավարի տիտղոսն է, որ Շապուհը շնորհել է Վահան Մամիկոնյանին իբրև բարձ և պատիվ (ըստ Փավստոսի վերոհիշյալ վկայության)՝ նրա եղբայր սպարապետ Վասակ Մամիկոնյանին դաժանորեն մորթազերծ անելուց հետո։ Այնուհետև Վահան Մամիկոնյանի և Մերուժան Արծրունու առաջնորդությամբ Հայաստանը նվաճելուց հետո, Շապուհը տվել է նրանց նաև իշխանություն՝ Հայոց աշխարհի «մնացորդ» ժողովրդին կառավարելու համար. «Եւ եթող [Շապուհ] յաշխարհին զՁիկն և զԿարէնն, զնոցա իշխանս զօրօք բազմօք. և զիշխանութիւն մնացորդացն ետ ի ձեռս Վահանայ և Մերուժանայ, և ինքն գնաց յԱտրպատական»[28]։ Ըստ այսմ էլ պետք է ենթադրել, որ Վահան-Առավանին շնորհվել է բարձրագույն վարչական իշխանություն, այն է՝ հազարապետի պաշտոն։

Վերոհիշյալից բացի, Առաբանեսի և Վահան Մամիկոնյանի անձերի նույնության մասին է վկայում նրանց եղերական ճակատագիրը։ Ինչպես արդեն ասվեց, Պապը սպանել է տալիս Առաբանեսին և գլուխն ուղարկում Շապուհին ընծա, իսկ Վահան Մամիկոնյանի հայրենասեր որդին՝ Սամվելը, ինչպես վկա-

---

24 Փավստոս Բուզանդ, Դ գրություն, գլ. Ե, ԵԸ, ԵԹ։

25 Նույն տեղում, էջ 206—207։

26 «Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 299—300։

27 Բ-վ հնչյունափոխությունը որոշակի օրինաչափության արդյունք է։

28 Փավստոս Բուզանդ, էջ 227։

յում է Փավստոսը, սպանում է իր դավաճան հորը և փախչում Խաղտյաց երկիր. «Ապա որդի մի Վահանայ, անուն Սամուէլ, եհար սատակեաց զՎահան զհայր իւր, և զՈրմիզդուխտ զմայր իւր՝ զքոյր Շապհոյ Պարսից թագավորին. և ինքն փախստական լինէր յերկիրն Խաղտեաց»[29]։

Ուշագրավ է այստեղ նաև Խաղտյաց երկրի հիշատակումը. մեզ թվում է, որ որոշակի կապ կա Սամվելի՝ Խախտյաց երկիրը փախչելու (Փավստոս) և Պապ թագավորի՝ Լազիկայի լեռները փախչելու (Ամմիանոս) միջև։ Եթե նկատի ունենանք, որ Խաղտիքը և Լազիկան միևնույն երկրի տարբեր անուններն են, ապա կասկած չի մնում, որ Սամվել Մամիկոնյանը եղել է Պապ թագավորի գործակիցը և վերջինիս գիտությամբ է Սամվելը վրեժխնդիր եղել իր հայր Վահան-Առավանի ուրացության համար և ոչ թե այն պատճառով, որ Պապը կամեցել է հաճոյանալ Շապուհին, ինչպես ենթադրում է Ամմիանոսը։

Այսպես ուրեմն՝ Առավան հազարապետ. եղե՞լ է իրականում մի այսպիսի պատմական անձ Հայաստանում։ Կորյունը իր ուսուցիչ Մաշտոցի բուն կենսագրությունը (նախաբանից հետո) սկսում է հետևյալ խոսքերով. «Առն [...] Մաշտոց անուն, ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելւոյ Վարդան կոչեցելոյ, ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի դուռն Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանացն առ հազարապետութեամբն աշխարհիս Հայոց՝ Առաւանայ ուրումն»[30]։

Մինչև այժմ անհայտ էր, թե ով է այս Առավան հազարապետը, որի անձնավորությունը հատկապես կարևորվում է Մեսրոպ Մաշտոցի հետ ունեցած առնչությամբ և որին Կորյունը «ուրումն» (ոմն) է անվանում՝ սակավ հավաստի տեղեկություն ունենալու, արգահատանքի կամ որևէ այլ պատճառով։ Դազար Փարպեցին փորձել է պարզություն մտցնել Կորյունի հաղորդած տեղեկության մեջ՝ հայոց արքունիքում Մաշտոցի մուտք գործելու ժամանակի վերաբերմամբ և ըստ այսմ իրեն անհայտ Առավանի փոխարեն մուծել է Խոսրով թագավորի անունը, այսպես գրելով Մաշտոցի մասին. «զինուորեալ ի դուռն Հայոց արքային Խոսրովայ, կարգեալ յերամ մատենագիր արքունի դպրացն»[31]։ Իր հերթին Խորենացին, որ Մաշտոցի կենսագրության տվյալների մի զգալի մասը Կորյունից է առնում, նույնպես միայն այստեղ է հանդիպել Առավան հազարապետի անվանը և խուսափելով նրան հիշատակելուց, պարզապես գրել է, թե «[...] Մեսրոպայ, որ էր ի Հացեկաց Տարօնոյ, սնեալ և ուսեալ առ մեծին Ներսիսի, և յետ ելից Նորա յաշխարհէ՝ ի դրանն արքունի կարգեալ քարտուղար»[32]։ Այսպիսով, Խորենացին Մաշտոցի կենսագրության այդ կարևոր տարեթիվը կապում է Ներսես Մեծի մահվան թվականի հետ։

Բանասիրության մեջ ոմանք Առավանի հազարապետությունն ընդհուպ մոտեցնում են գրերի գյուտի ժամանակաշրջանին։ Ց. Մարկվարտը նրա պաշ-

---

29 Նույն տեղում, էջ 230։ Մ. Խորենացին Սամվել Մամիկոնյանի հոր սպանությունը հիշելիս, չգիտես ինչու, վերջինիս կոչում է Վարդան, այս պատճառով էլ Մ. Օրմանյանը նշում է, թե Խորենացին Վահանի մահվան մասին հիշատակություն չունի (տե՛ս Մ. Օրմանյան, նշվ. աշխ., հ. 1, սյուն. 211)։ Հմմտ. Մ. Խորենացի, Պատմ. Հայոց, Գ. հր, էջ 319. «Բայց Սամուելի Մամիկոնեանի լինքն ըմբռնեալ զթուղթն Խոսրովու և զպատճէն թղթոյն նախարարացն՝ զատուցեալ ի նոցանէ գնաց առ կայսրն Արկադ։ Քանզի էր սպանեալ նորա զհայր իւր Վարդան յաղագս ուրացութեանն, և զմայր իւր Տաճատուրհի, և երկնչելով ի Պարսից և ի թեռեաց իւրոց Արծրունեաց՝ ոչ իշխէր զատչել ի Յունաց»։ Բայց տարակույս չի կարող լինել, որ «Վարդան» գրչական այլայլում է, և Խորենացին ևս նկատի ունի այստեղ նույն Վահան Մամիկոնյանին, ինչ որ Փավստոսը։

30 Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1981, էջ 84 (ընդգծումը մերն է—Ա. Մ.)։

31 «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան», Թիֆլիս, 1907, էջ 27։

32 Մովսես Խորենացի, էջ 316։

սոնակալումը հայոց արքունիքում զետեղում է Խոսրով Գ և Վռամշապուհ թագավորների գահակալության միջև[33]։ Մարկվարտին հետևեց (թեև առանց նրան հիշատակելու) նաև Ն. Ակինյանը, որ կարծում է, թե 387 թ. Խոսրովի մահից (?) հետո նրա Վռամշապուհ եղբայրը գահակալել է միայն տարիներ անց՝ 400 թվականին, ուստի այդ ամբողջ միջակայքը Ակինյանը հատկացնում է Առավանի հազարապետությանը[34]։ Վերջինիս նա նույնացնում է այն Զիկ նվիրակի հետ, որ, ըստ Փավստոսի, իբրև «դաստիարակ» ուղարկված էր Խոսրովի հետ Հայաստան[35]։ Իր միտքը մի կերպ հիմնավորելու համար Ակինյանը «Զիկ» անունը համարում է ավելի պաշտոնի տիտղոս, քան հատուկ անուն[36]. այնպես որ, ստացվում է, թե «Զիկ նուիրակ» Փավստոսի մոտ կրկնակի տիտղոս է, որին Ակինյանը շնորհում է Առավան անունը։

Սակայն ինչպես իր ժամանակին մատնանշել է Հ. Մանանդյանը, բազմերախտ դերմանացի հայագետի տեսակետը չի համապատասխանում պատմական իրողության։ Ղ. Փարպեցու և Մ. Խորենացու ժամանակագրական տվյալները, Սեբեոս-Անանունի թագավորների եռյակ շարքը, ինչպես և պաշտոնական պատմագիտությունը հիմք չեն ընձեռում նման ենթադրության, այլ ընդհակառակն, միահամուռ հաստատում են, որ Վռամշապուհն անմիջապես հաջորդել է իր Խոսրով եղբորը[37]։ Մարկվարտի կարծիքը հայոց Խոսրով և Վռամշապուհ թագավորների միջև պարսից վերակացու տեղադրելու վերաբերյալ հենվում է միայն Ղ. Փարպեցու «Հայոց պատմության» բնագրի մի աղավաղված հատվածի վրա, որ, ինչպես ցույց է տվել Գ. Խ. Սարգսյանը, հետևանք է ձեռագրի խաթարման և այդ պատճառով՝ բնագրի շարադրանքի եռևառաջության[38]։ Իրավացիորեն առարկելով Մարկվարտին, Հ. Մանանդյանն իր հերթին, առանց բավարար հիմքի, Առավանի հազարապետությունը դնում է Խոսրով Գ-ի թագավորության տարիներին՝ Մաշտոցի դիվանադպիր դառնալու վերաբերյալ Ղաղար Փարպեցու և Կորյունի վկայությունները ուղղակի իրար կցելու ճանապարհով[39]։ Սակայն վաստակաշատ հայ պատմաբանի կարծիքը

---

33 Մարկվարտը Առավան հազարապետին միանգամայն տարբեր է նկատում «Ամմիանոսի մոտ հիշատակվող Պապ թագավորի ժամանակակից մագիստրոսից՝ „magister armorum Arrabannes" («Մեսրոպ Մաշտոց», հոդվածների ժողովածու, էջ 179՝ տողատակում)։

34 Ն. Մարկվարտի և Ն. Ակինյանի կարծիքը հիմք է ընդունել Ա. Մարտիրոսյանը «Հայոց դրերի գյուտի թվականը» հոդվածում (Պատմա-բանասիրական հանդես, 1981, № 3, էջ 80) և «Մաշտոց» գրքում (Երևան, 1982, էջ 219—221)։

35 Ն. Ակինյան, Ս. Մաշտոց վարդապետ. կյանքն և գործունեությունը, Վիեննա, 1949, էջ 27—28։ Տե՛ս նույն կարծիքը նաև Ն. Ակինյանի հրատարակած «Կորյուն, Պատմություն վարուց ս. Մաշտոցի», էջ 73, ծան. 9։ Խոսրով Գ թագավորը 387 թվականին չի մահացել, ինչպես կարծում է Ակինյանը, այլ միայն աքսորվել է Պարսկաստան և Վռամշապուհի 21-ամյա թագավորությունից հետո երկրորդ անգամ դարձյալ գահակալել է—ըստ Խորենացու՝ մեկ տարի, ըստ Փարպեցու՝ ութ ամիս։

36 Հմմտ. F. Iusti, նշվ. աշխ., էջ 385՝ „Zik, Titel eines der höchsten Beamten, dann auch Eigenname".

37 Հայ պատմագիտության վերջին տվյալներով Խոսրով Գ-ն թագավորել է 385—388 թթ., իսկ Վռամշապուհը՝ 388—413/14 թթ.։

38 Գ. Խ. Սարգսյան, Մովսես Խորենացու Հայոց պատմության ժամանակագրական համակարգը, Երևան, 1968, էջ 100—109։ Հեղինակը (էջ 100—106) վերականգնել է Ղ. Փարպեցու աղավաղված հատվածի ճիշտ շարադրանքը, որ արդարանում է ոչ միայն Փարպեցու իր իսկ ժամանակագրական տվյալներով, այլև Խորենացու հաղորդած տեղեկություններով, որը Գ գրքի Նե գլուխը շարադրելիս հենվել է Փարպեցու նախնական, դեռևս չաղավաղված բնագրի վրա։

39 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 256, 450։ «Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար» հոդվածում («Մեսրոպ Մաշտոց», հոդվ. ժողովածու, էջ 25—84) նույն միտքը Մանանդյանը հիմնավորում է մի փոքր այլ կերպ. «Վաղար-

հերքվում է հետևյալ պարզ պատճառաբանությամբ՝ Կորյունի վկայակոչած Առավանի հազարապետությունը եղել է մի ժամանակամիջոցում, երբ հայոց թագավորը գահազուրկ էր, քանի որ դժվար է համակերպվել այն մտքի հետ, որ հայոց արքունիքի մասին խոսելիս Կորյունը թագավորի անունը հիշատակելու փոխարեն կարող էր ավելի հիշարժան համարել ոմն Առավանի հազարապետությունը։ Բացի այդ, Փավստոսի հաղորդած տեղեկությամբ, պարսից Շապուհ թագավորը, գահ բարձրացնելով մանուկ Խոսրովին, նրա համար դաստիարակ նշանակեց Զիկ նվիրակին,— այս պարագայում պատմիչն առավել ևս պետք է իրազեկ լիներ երկիրը կառավարող հազարապետի մասին, եթե այդպիսին իսկապես գոյություն ունենար։

Միաժամանակ, Հ. Մանանդյանը կասկածի տակ է առնում Խորենացու այն հաղորդման հավաստիությունը, ըստ որի Մաշտոցն աշակերտել է Ներսես Մեծ կաթողիկոսին և նրա աշխարհից փոխվելուց հետո ծառայության է անցել հայոց արքունիքում[40]. բայց ինչպես պետք է կարծել, Խորենացուն էլ, ընդհակառակն, չի համոզել Խոսրով Գ թագավորի և Առավան հազարապետի համաժամանակ իշխելու վերաբերյալ տեղեկությունը, որ հիմք է ընդունում Մանանդյանը։ Ըստ երևույթին, Պատմահայրը նկատել է դրանց մեջ եղած ժամանակագրական անպատեհությունը, ընդ որում ձեռքի տակ ունենալով Կորյունի և Ղազար Փարպեցու վկայությունները, նա որոնել ու գտել է մի երրորդ կռվան՝ Մաշտոցի արքունի ծառայության տարեթվի համար։

Մաշտոցի մուտքը հայոց արքունիք և հետևաբար Առավանի հազարապետության ժամանակը համեմատաբար ճիշտ է որոշել Մ. Չամչյանը, տեղագրելով այն Խոսրով Գ-ի թագավորությանը նախորդող տարիներին. «Սա [Մեսրոպ] 'ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբ՝ աշակերտեցաւ մեծին Ներսեսի հայրապետի, և եղև նորա նոտար. և յորժամ փոխեցաւ յաշխարհէ մեծն Ներսէս, եկաւ 'ի դրան արքունի՝ ըստ յորդորելոյ հազարապետին հայոց Առաւանայ. և եղև դիւանադպիր թագաւորացն հայոց [...] և կացեալ անդ ամս իբր եօթն մինչև յերրորդ ամ արքային Խոսրովայ՝ փառավորեցաւ յոյժ»[41]։ Նշանակում է, Մ. Չամչյանը և ներկա դարասկզբին նաև Մ. Օրմանյանը[42], հետևելով Խորենացուն, Մաշտոցի կենսագրության առաջին նշանակալից իրադարձության ժամանակը որոշելիս ելակետ են ունեցել Ներսես Մեծի մահվան տարին, որ ինչպես այժմ կտեսնենք, ճշտիվ համապատասխանում է Առավանի հազարապետության ավարտին։ Ուստի Խորենացու այդ կռվանը նոր ուժ է ստանում Առավանի անձի՝ որպես Վահան Մամիկոնյանի՝ առաջարկվող մեկնաբանման շնորհիվ։ Եվ իսկապես, եթե Ներսես Մեծը վախճանվել է Պապի թագավորության նախավերջին տարում (373 թ.)[43], իսկ Առավան հազարա-

---

շապատում Մաշտոցի ծառայելու ժամանակի հարցում բանասերները հակասություն են գտնում Կորյունի և Փարպեցու վկայություններում։ [...] Այս հակասությունը, որ մատնանշել է Մարկվարտը, թյուրիմացության արդյունք է։ Ամենայն հավանականությամբ, Առավանը հազարապետ է եղել Խոսրով III-ի օրով, որը թագավորել է 383—388 (կամ 386) թթ. և հետևաբար, կարելի է ենթադրել, որ Կորյունի ճախճակոտ և իսկական բնագրում մատնանշված է եղել, որ Մաշտոցը ծառայել է Խոսրով III-ի արքունիքում Առավանի հազարապետության օրով» (էջ 35—36, ընդգծումը մերն է.— Ա. Մ.)։

40 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 254. «Բանասերները սովորաբար մատնանշում են, որ Մաշտոցն աշակերտել էր Ներսես կաթողիկոսին (373 թ.)։ Այս տեղեկությունը, որ գտնվում է «Պատմութիւն սրբոյն Ներսեսի» երկում և Խորենացու Պատմության մեջ, ինչպես միանգամայն ճիշտ նկատել է Խալաթյանցը, «չէ կարող ստույգ լինել, որովհետև այդ մասին ևս հիշատակություն չունեն Կորյունը և Ղազար Փարպեցին»։

41 Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հ. 1, Վենետիկ, 1874, էջ 483։

42 Մ. Օրմանյան, նշվ. աշխ., հ. 1, սյուն. 266—267։

43 Հ. Դանիելյանը Ներսես Մեծի մահվան տարեթիվ է ընդունում 372 թվականը (տե՛ս «Հայաստանի բաժանման տարեթիվը՝ 387 թե՞ 385», «Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 1, էջ 210)։

պետի մահը տեղի է ունեցել Պապի կենդանության օրոք, ապա այս դեպքում Պապ թագավորի գահակալման վերջին տարին՝ 374 թ., պետք է համարել այն վերջնագիծը, որից ավելի ուշ Մաշտոցը չէր կարող արքունի դիվանում դպիր նշանակվել առ հազարապետութեամբ Առաւանայ:

Առավանի հազարապետությունը պետք է նախորդեր Խոսրով Գ-ի թագավորությանը և համընկնում է, բնականաբար, այն ժամանակաշրջանին, երբ Սեբեոսի Պատմության տվյալների համաձայն[44], Արշակ Բ-ին աքսորելուց հետո Շապուհ Բ-ն տասներկու տարի (մոտ 378) իրեն հռչակել է Հայաստանի թագավոր։ Դատելով ըստ ամենայնի, նա այդ շրջանում Հայաստանը կառավարել է Առավանի կամ նույն Վահան Մամիկոնյանի ձեռքով, որի իշխանությունը կարող էր շարունակվել որոշ ժամանակ նաև Պապի թագավորությանը զուգահեռ, ինչպես ենթադրել է տալիս Ամմիանոսի պատմությունը։ Անհամեմատ պակաս հավանական է կարծել (եթե հետևելու լինենք Մարկվարտին), որ գրեթե 20-ամյա ժամանակահատվածում (368—388 թթ.) Հայաստանը կառավարել են միևնույն Առավան անունով երկու հազարապետ (կամ սատրապ)՝ երկուսն էլ նշանակված պարսից Շապուհ թագավորի հրամանով։ Մյուս կողմից, ինչ-խոսք, ավելի հաստատ և կողմնակի բավարար կովանների բացակայության պարագայում դժվար է «անբեկանելի» վճիռ արձակել, սակայն Ամմիանոսի և Կորյունի Առավանների մեջ միևնույն պատմական անձին՝ Վահան Մամիկոնյանին, ճանաչելու մեր վարկածը մինչ այս ենթադրված մյուս նույնացումների համեմատ մնում է ամենից ավելի հավանականը։ Այսպիսի մեկնաբանումից հետո միանգամայն հասկանալի է դառնում, թե ինչո՞ւ Խորենացին, որ շյուղ առ շյուղ հավաքելով հյուսել է իր «Հայոց պատմությունը», միանգամից դեն է նետում Կորյունի հաղորդած պատմական տեղեկությունը հայոց աշխարհում արգահատելի Առավանի հազարապետ լինելու մասին. թե ինչո՞ւ Պատմահայրը զանց է առել պատմական այդ կարևոր անձին, բայց Կորյունի հիշած մյուս բոլոր անձանց անունները (նաև վրաց և աղվանից) խնամքով մուծել է իր պատմության մեջ, թեև նրանց մասին ամենևին էլ ավելի իրազեկ չէ և նույնքան սուղ տեղեկություններ ունի, որքան և առաջինի վերաբերյալ։

Վերոհիշյալից բխող կարևոր հետևությունն այն է, որ եթե Մեսրոպ Մաշտոցը 373—374 թթ. անցել է արքունի ծառայության՝ իբրև դիվանի դպիր կամ քարտուղար, ապա նա պետք է այդ ժամանակ լիներ գոնե 17—18 տարեկան. նշանակում է նրա ծննդյան տարին, ավանդաբար ընդունված 360—362 թթ. փոխարեն, պետք է դնել 356—357 թթ.։ Այսպիսի հասակը ավելի հարմար պետք է նկատել սկսնակ գրագիր և զինվորական սպասավոր նշանակվելու համար, որպիսին եղել է Մաշտոցը հայոց արքունիքում՝ ըստ Կորյունի։ «Մաշտոցի պաշտոնը, ինչպես դժվար չէ համոզվել, համապատասխանում է այն զինվոր-գրագիրների պաշտոնին, որոնք ստորին ծառայողներ էին հռոմեական բարձր պաշտոնյաների դիվաններում և անվանվում էին «գրասենյակայիններ» „(officiales կամ scrinarii)[45]“.

Առավանի հազարապետությունը Խոսրովի թագավորությունից հետո՝ այսինքն 389—400 թթ. դնող բանասերները պետք է հաշվի նստեն նաև մեկ այլ փաստի հետ, որ 390-ական թվականներին Մաշտոցն արդեն երեսունն անց մարդ էր, մի տարիք, որ չի կարելի հարմար համարել սկսնակ գրագիր և զինվորական ցածրաստիճան սպասավոր կարգվելու համար։

---

44 «Պատմութիւն Սեբէոսի», էջ 55։ Ըստ Ամմիանոսի տվյալների, Պապը թագավորել է իր հոր՝ Արշակ Բ թագավորի աքսորից մեկ-երկու տարի անց, այնպես որ Սեբեոսի և Ամմիանոսի վկայություններն այստեղ համընկնում են։

45 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 256—257։

КТО БЫЛ АРАВАН ԻАЗАРАПЕТ?

АЛЬБЕРТ МУШЕГЯН

Резюме

Касаясь важных военно-политических событий, происходивших в Армении в 360—370 гг. н. э., римский историк Аммиан Марцеллин выводит на сцену префекта Армении Килака и магистра войск Аррабанна (последний в русском переводе Ю. А. Кулаковского ошибочно назван Артабанном). Историко-филологические сопоставления соответствующих сведений Аммиана и армянских источников V в. позволяют не только отожествлять личность указанного магистра войск Аррабанна с Ваганом Мамиконяном, братом спарапета Васака Мамиконяна, но и установить, что магистр Араван у Аммиана есть не кто иной, как упомянутый Корюном Араван ԻАзарапет. Это обстоятельство и некоторые данные дают возможность уточнить дату рождения изобретателя армянской письменности Месропа Маштоца, а также дату его вступления на службу в царский диван.